ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ No
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
Գիտական խորհրդի
ՆԻՍ թիվ 1
2019 թվականի
ՀՈՒՆՎԱՐԻ 31

Ներկա էին 52 անդամ:
Նիստը նախագահում էր ռեկտորի պաշտոնակատար, պրոֆ. Սոնա Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շնորհավորանքներ (Ալինա Փահլևանյան, Ծովինար Չալոյան, Տիգրան Մանսուրյան)
2. Դեկանների ձմեռային քննաշրջանին վերաբերող հաղորդում
3. Ռեկտորի պաշտոնակատար պրոֆ. Սոնա Հովհաննիսյանի խոսքը
4. Գիտական գծով պրոռեկտորի խոսքը
5. Ֆինանսա-տնտեսական գծով պրոռեկտորի խոսքը
6. Էթիկայի հանձնաժողովի կանոնակարգի ներկայացում
7. Ուսանողական խորհրդի փոփոխության անհրաժեշտության հարցը
8. Այլ հարցեր

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

Գիտ. քարտ. - Շնորհավորում ենք ԵՊԿ պրոֆեսոր, արվ. թեկն. Ալինա Փահլևանյանին 2018 թվականին հեղինակային «Հայ երաժշտության ֆոլկլորագիտության արդի խնդիրները» գրքի լույս ընծայման առիթով (հրատարկվել է ԵՊԿ Գիտխորհրդի որոշմամբ):

Փահլևանյան Ալինա - Սա մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողների մեկ կիսամյակի դասընթացի համար մշակված դասագիրք է՝ Ֆոլկլորագիտության արդի խնդիրների մասին է խոսքը, այն ներկայացվում է ավելի բարձր գեղագիտական կատեգորիաների սահմաններում, այլ ոչ այն կուրսը, որն արդեն անցել են բակալավրիատում: Այստեղ 15 գլուխ է 15 դասի համար: Դասագիրքը լույս է տեսնում առաջին անգամ: ԵՊԿ գրադարանն անպայման կունենա:

Գիտ. քարտ. - Հաջորդ շնորհավորանքը կապված է ԵՊԿ պրոֆեսոր Ծովինար Չալոյանի գիտական գործունեության միջազգային գնահատանքի հետ: Նշենք, որ 2018 թվականին «Անտարես» հրատարակչությունը լույս է ընծայել հարգարժան դասախոսի «Գեղագիտության պատմություն» դասագրքի երկրորդ լրացված խմբագրությունը: Այս անգամ հրատարակումը համալրվել է գեղարվեստական պատկերազարդերով: Ծ. Չալոյանը Փարիզի VIII համալսարանի հրավիրյալ պրոֆեսոր է, որտեղ կարդացել է Հայկական գեղագիտության պատմության լրիվ դասընթացը: Նա Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի իսկական անդամ է, որի շրջանակներում մասնակցել է բազմաթիվ գիտական ֆորումների: 2018-ի սեպտեմբերին հրավիրվել է Ֆրանսիայի Գիտությունների Ակադեմիայի ու «Հայկական ռենեսանս» կենտրոնի կողմից և կարդացել «Հայկական ռենեսանս» զեկուցումը: Նույն տարի արժանացել է «Ֆրանսիական Ռենեսանս» շքանշանի, որին ամեն տարի արժանանում է միայն մեկ օտարերկրացի: Շնորհավորում ենք:

Չալոյան Ծովինար - Շքանշանը ստացել եմ Ֆրանսիական ակադեմիայից, որը կոչվում է «Կոզիների ակադեմիա»: Այնտեղ կա «Ֆրանսիական ռենեսանս» կենտրոն, որի նպատակն էր ֆրանսերեն լեզուն ավելի մաքուր դարձնել, Ֆրանսիայի հեղինակությունը բարձրացնել: Ինձ հրավիրել էին Կենտրոնի 100-ամյակի առթիվ 2015-ին, իսկ 2018-ին Հայաստանում Ֆրանկաֆոնիայի գագաթաժողովի առթիվ ազատ թեմայով զեկուցումով հանդես գալու հնարավորություն տվեցին: «Վերածննդի կենտրոնում» ցանկություն հայտնեցի խոսել Հայկական ռենեսանսի մասին՝ աշխարհին ևս մեկ անգամ այս թեմայի մասին հիշեցնելու համար: Երևան վերադառնալուց հետո առաջադրվեցի և ստացա «Ֆրանսիական Ռենեսանս» շքանշանը:

Դասագիրք նվիրելու հնարավորություն չունեմ, քանի որ հրատարակչությունից ընդամենը հինգ օրինակ եմ ստացել:

Գիտ.քարտ. - 2019-ի հոբելյարներից է Տիգրան Մանսուրյանը, ում ուսումնական, մանկավարժական ու հասարակական կյանքի առանձին էջերը անմիջականորեն կապված են Երևանյան կոնսերվատորիայի հետ: 1967-1986թթ Տ. Մանսուրյանը վարել է «Ժամանակակից երաժշտության տեսություն» իր հեղինակային ֆակուլտատիվ դասընթացը: Այդ տարիներին նրա նախաձեռնությամբ դասախոսական շարքեր կարդալու են հրավիրվել Լենինգրադի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Միխայիլ Դրուսկինը, «Նոր Վիենական դպրոցի» սկզբունքների գիտակ ու հանրահռչակող Ֆիլիպ Գերշկովիչին: 1992-1995 թթ. եղել է ԵՊԿ ռեկտորը: Կոնսերվատորիայի անունից շնորհավորական ուղերձը Գիտխորհուրդը կփոխանցվի հոբելյարին:

Սահակյան Լուսինե - Նաև կա նախնական պայմանավորվածություն կոնսերվատորիայում կազմակերպել հանդիպում Տիգրան Մանսուրյանի և ուսանողների, դասախոսների հետ:

Գիտ.քարտ. - 2018-2019 առաջին սեմեստրի քննություններին վերաբերող հաղորդումները կներկայացնեն դեկանները:

Ռուբեն Ասատրյան /Վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան/ - Դեկտեմբերի սկզբից ֆինանսական պարտքը 48 մլն. դրամից կրճատվել է՝ հասնելով 7,900,000-ի: Շատ ուսանողներ պարտավորագրերով թույլ են տրվել մասնագիտական քննությունների: Անգամ նրանց պարտքը մարելուց հետո կմնա 2,530,000 դրամ, որը լուրջ չափ է: Բոլոր ընդառաջումները հուսալի արդյունքներ չտվեցին, ֆինանսական մեծ պարտքեր ունեցող և առանց պարտավորագրի ուսանողները ենթակա են հեռացման: Քննաշրջանն այսպիսի պատկեր ունի.

Ակադեմիական երգեցողություն – 151 ուսանողից մնացել են 39-ը, որոնք կավարտեն լուծարքային շրջանում:

Ջազային-էստրադային բաժին – 52-ից չեն հանձնել 31-ը:

Օպերային և սիմֆոդիրիժորներ – 1-ը չի հանձնել:

Կոմպոզիցիա – 12-ից չի հանձնել 1-ը:

Խմբավարներ – 26-ից չի հանձնել 8-ը:

Երաժշտագետներ – 14-ից բոլորը հանձնել են:

Ժող. գործիքներ և ժող երգ. – 99-ից 18-ը բացթողում կա, այստեղ ունենք բանակ զորակոչվող ուսանողներ, երբ զորակոչային պրոցեսը վերջնական ավարտվի, կներկայացնենք ամբողջական արդյունքները:
Հեռացվողների Զեկուցագիրը կներկայացնեմ ռեկտորի պաշտոնակատարին՝ հաստատման:

Ռուբեն Սմբատյան /Նվագախմբայի ֆակուլտետի դեկանի տեղակալ/ - Հիմա վաղ է խոսել ամբողջ պատկերի մասին. քննաշրջանն ավարտվել է, բայց լիկվիդացիոն շրջանն առջևում է: Լիարժեք պատկեր կունենանք միայն փետրվարին: Այսօրվա դրությամբ.
Լարային ամբիոն - 95 ուսանող կա /բակալավրիատ և մագիստրատուրա/, որից 19-ը չեն ստացել՝ հիմնականում ստուգարքներ: III կուրսի 19 հոգուց 15-ը (գրեթե կուրսի 70%-ը) «Բնապահպանություն» առարկայից ստացել է «չստուգված»: Կարծում եմ՝ կարող է պատճառ լինել վերջին օրը չներկայանալը:
Փողային բաժին – 95-ից պարտք են 18-ը: Աշխատում ենք, որ լիկվիդացիոն շրջանը մաքսիմում անցնի հոգուտ ուսանողի:

Իրինա Հակոբյան /Դաշնամուրային ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար/ - «Մասնագիտություն» և «Կոնցերտմայստերություն» առարկայից հանձնած ուսանողների ձմեռային քննական արդյունքներն՝ ըստ այն չափորոշիչների, որոնք կիրառելու փորձ ունեցել ենք նախորդ սեսիոն շրջանում: Կարողացանք ապահովել գնահատման փորձարկված ձևաչափը, որը թույլ է տալիս ուսանողի կատարմանը գնահատական տալ ավելի մանրակրկիտ ու հստակ: Քննությունը հանձնում էին Բակալավրիատի I և II կուրսի, Մագիստրատուրայի II կուրսի ուսանողները: Հանձնաժողովների յուրաքանչյուր անդամ ստացել է գնահատման սանդղակ՝ հետևյալ չափորոշիչներով.

1. Տեխնիկական վարպետություն
2. Ձայնի վերարտադրում և պեդալիզացիա
3. Ոճի և ձևի մեկնաբանություն
4. Ծրագրի համապատասխանությունը տվյալ տարվա պահանջներին

Ձմեռային քննաշրջանի ընթացքում ձևավորվել էր պրոֆեսորադասախոսական կազմով 4 հանձնաժողով: Արդյունքում յուրաքանչյուր ուսանող ստացել է 16 գնահատական: Մտավախությունն այն էր, որ գնահատման մեջ մեծ տարբերություններ չլինեն:

Քննությունները հանձնած 56 դաշնակահարից՝

18 – գերազանց

32 – լավ

6 – բավարար:

Տարբեր կուրսերից 12-ը չեն հանձնել (ունենք բժշկական տեղեկանք ներկայացրած ուսանողներ, կան ուսանողներ, ովքեր պետք է մեկնեին կամ արդեն գտնվում էին միջազգային մրցույթներում): Նրանք լիկվիդացիոն շրջանում կավարտեն քննական պարտավորությունները:

Զուրաբյան Ժաննա - Դաշնամուրային ֆակուլտետում կիրառված գնահատման սանդղակի 4 տարբեր կետերի դեպքում, եթե ասենք թույլ է եղել ստեղծագործության մակարդակը, բարդությունը, իսկ մյուս կետերում լավ դրսևորումներ կան, ինչպե՞ս եք մոտենում:

Հովհաննիսյան Արամ /Ուսումն. գծով պրոռեկտորի պաշտոնակատար/

Դաշնամուրայյին ֆակուլտետում կիրառվող չափորոշիչների սանդղակը 99%-ով համապատասխանում է իմ կազմած չափորոշիչներին, միայն իմ կազմած տարբերակում «Ծրագրի ամբողջություն» բաժին կա, որ եթե ուսանողը պետք է նվագի 4 ստեղծագործություն, բայց կատարել է 3-ը, բնական է չի կարող ստանալ 20, ոչ էլ՝ 16, դա գնահատվում է 15:

Պեպանյան Վաղարշակ /Փողային-կամերային ամբիոնի վարիչ/ Փողայինների մոտ կա «выдержка» , նրանք չեն կարող 4 (եթե լինի 1 կոնցերտ և 3 միջին-փոքր կտավի գործ) ստեղծագործություն նվագել:

Հովհաննիսյան Արամ Չափորոշիչները ճկուն պետք է լինեն կատարողական բոլոր բաժինների համար: Իմ կազմած սանդղակն ունի հետևյալ բաժինները.

1. Տեխնիկական պատրաստվածություն
2. Ձայնարտաբերման որակ
3. Ոճային մեկնաբանում
4. Ծրագրի համապատասխանություն
5. Ծրագրի ամբողջականություն

Հովհաննիսյան Սոնա Գնահատման սանդղակային ձևաչափը քննարկվելու է ամբիոններում: Այն առաջին պահին անսովոր է: Օրինակ՝ խմբավարական ամբիոնում մեկ քննություն անցկացնելուց հետո ամեն ինչ կարգավորվեց. ընդամենը անաչառ դրվում են գնահատականները և միջինացվում՝ գումարվում, բաժանվում 4-ի: Այս ձևը չենք կիրառել և մի քիչ լարում է մտցնում: Հավատացեք, որ գործող համակարգ է. մենք այս տարի ունեցանք դժգոհ ուսանող ու 1 բողոք, բայց կարողացանք հանգամանորեն և օրինակելի ձևով որոշել հարցը: Արդյունքը հրաշալի էր: Հասկանում եմ, որ կարող են տարաբնույթ կարծիքներ լինել և հասկանում եմ, որ սա դեռ քննարկման փուլ է: Մենք նորամուծություն չենք անում: Սա միայն դաշնամուրային ֆակուլտետը չի նախաձեռնել ու կիրառել, այն համաշխարհային գնահատման կարգ է:

Ավանեսով Արթուր (Ստեղծագործական ամբիոնի վարիչի պաշտոնակատար)Մեկ հավելում. բոլոր ամբիոնները կարող են իրենց ձևաչափը մշակեն: Օրինակ Կոմպոզիտորական ամբիոնում առաջարկել եմ այսպես. մենք ունենք ներկայացվող գործերի քանակ, սակայն ստեղծագործական երևակայությունը չենք կարող սահմանափակել: Առաջարկեցի հետևյալ լուծումը. եթե ուսանողը ներկայացնում է 1 ստեղծագործություն, որը ծրագրից դուրս է, սակայն պարունակում է ծրագրի բազմաբովանդակ պահանջները (օրինակ՝ III կուրսում ունենք կամերային ստեղծագործության և ֆուգայի պահանջ և, եթե գրում է բազմամաս կամերային ստեղծագործություն, որի մի մասը պոլիֆոնիկ է), արդեն հաշվվում է երկու բալ: Պետք է խստությունը չխոչընդոտի երևակայությանը, ստեղծագործելուն:

Ասատրյան Ռուբեն Նույնը եղավ նաև խմբավարների մոտ. ուսանող, ով ղեկավարում է երգչախմբային մեծ կտավ և ուսանող, ով ղեկավարում է փոքր մասշտաբի նյութ: Այդ դեպքում կարող ենք լսել ոչ թե 5-ը այլ՝ 1 խոշոր կտավը:

Հովհաննիսյան Սոնա (ռեկտորի պաշտոնակատար) Այստեղ կա չարածը քողարկելու վտանգը և սրա մասին հարկավոր է մտածել: Այսինք, քննական հանձանժողովին հրաշալի ներկայացվում է 1 մասը, մնացածը գրանցվում են, որպես կատարված աշխատանք, երբ բոլորովին չեն անդրադարձել: Այսպիսի վտանգ կա: Չեմ ասում, որ բոլոր ամբիոններում է, բայց հնարավոր է, որ լինի: Պետք է մտածել՝ ինչպես կանխել, լուծում գտնել:
Հանձնաժողովների կազմերի մեջ փոփոխությունների առաջարկով եմ ուզում խոսել: Կարծում եմ, որ տարբեր ամբիոնների դասախոսներ պետք է ներգրավված լինեն քննություններին: Սա միջամբիոնային կապերի, երաժշտական թարմ կարծիքի, փոխհամագործակցության էլեմենտ է, որ կարելի է ներդնել: Այս տարբերակը պետք է կարգավորել դեկանատում, ամբիոնների վարիչների հետ համատեղ աշխատանքով:

Հովհաննիսյան Արամ Հանձնաժողովի կազմի «3+1» գաղափարի մասին: Եթե երեքին ներկայացնում է տվյալ ամբիոնը, չորրորդին ընտրում են տվյալ ամբիոնի տրամաբանությանը համապատասխան:
Մի հավելում քննական ծրագրի կատարման ժամանակ հնարավոր քողարկման կարծիքի առումով: Եթե հանձնաժողովը, օրինակ, լսում է I մասը և ասում է «վերջ», կառաջարկեմ առնվազն բոլոր մասերից գոնե սկիզբը լսեն: Եվ եթե տրվում է պատրաստ լինելու մասին կարծիք, կարելի է գնահատել: Ոչ թե չլսածը գնահատվի:
Իսկ հանձանժողովի կազմում, ըստ միջազգային փորձի, պետք է հստակեցում արվի:
Առաջարկում եմ 6-7-ի փոխարեն կազմել 4 հոգանոց հանձնաժողովներ և սկզբից մինչև վերջ կատարել աշխատանքային այդ դրույթը:
Մտահոգություն հնչեց, թե ինչպես վարվել այն դեպքում, երբ ունենք 4 գնահատական, բայց ակնհայտ տարբերվող ցածր թվեր: Նման դեպքում բացառում ենք մաքսիմալ և մինիմալ գնահատական:

Նավոյան Միհեր Դաշնամուրային ամբիոնում այդպես էր կիրառվում. ընդհանուր միջինից 2 միավոր բարձր և ցածր գնահատականները չէին հաշվում, քանի որ ակնհայտ սուբյեկտիվ է:

Հովհաննիսյան Սոնա Եթե գնահատականը միջինացվում է, հաշվել-չհաշվելու կարիք չի լինում: Նույնիսկ ամենասուբյեկտիվ գնահատականը այս համակարգի շնորհիվ հաշվի է առնվում: Այս համակարգի ամենամեծ առավելությունը դա է, մենք ունենք տարբեր կարծիքներ, մոտեցումներ, չափանիշներ, բայց, եթե մեկի մոտ կա նման ցածր գնահատական, կունենա ինչ-որ հիմք: Կարծում եմ, որ սա պետք է ազդի ընդհանուր միջին գնահատականի վրա: Սա համարում եմ համակարգի «պլյուսը» , ոչ թե՝ «մինուսը»:

Նավոյան Միհեր Երաժշտագիտական ամբիոնում (այստեղ մի քանի տարի դիպլոմային աշխատանքները միջինացմամբ են գնահատվում) ունեցել ենք դեպք, երբ գնահատականը ակնհայտորեն սուբյեկտիվ, ոչ պրոֆեսիոնալ մասնագիտական վերաբերմունք է եղել: Ինչպե՞ս պարզել նման դեպքերը:

Հովհաննսիյան Սոնա Դա քննարկման հարց է: Իմ ասելիքը ասեցի:

Գեղամյան Գայանե Քննական հանձնաժողովներում այլ ամբիոններից ներգրաված անձը գնահատելու է, թե՝ ազատ է:

Հովհաննիսյան Սոնա Կարծում եմ՝ սկզբնական շրջանում կարող է ազատ մասնակցություն լինել. կողքից լսող և կարծիք հայտնող դասախոս լինի: Պետք չի, որ միանգամից միջամտություն ունենա, գնահատի, որովհետև շատ կարևոր են մասնագիտական գնահատականները:

Ավանեսով Արսեն / Արտասահմանյան ուսանողների ֆակուլտետի դեկան /

Արտասահմանցի ուսանողները միշտ միշտ հանձնում են քննաշրջանի II փուլում: Այս տարի շատ լավ նախաձեռնություն եղավ. թույլատրվեցին մասնագիտություն առարկաների քննությունները հանձնել դեկտեմբերին: Ունենք ակադեմիական 45 պարտք, որոնք վերաբերում են տեսական առարկաներին: Սա մեր ֆակուլտետի համար շատ լավ ցուցանիշ է: Ֆինանսականն էլ միշտ կատարել ենք 100%-ով:

Մեյմարյան Քրիստինե /Ֆինանսական և տնտեսական գծով պրոռեկտոր/

1. Ներկայացնեմ մեզ մոտ անցկացված աուդիտի արդյունքները, որոնք հիմնականում կենտրոնացած են Ուսումնական պրոցեսի վրա: Խնդրում ենք շատ ճիշտ գնահատեք ուսանողների գիտելիքը, որ ճիշտ ստացվի միջին որակական գնահատումը (ՄՈԳ), հակառակ դեպքում լինում են արհեստական բարձր միավորներ: Սահմանված ՄՈԳ-ի առկայության պայմաններում ուսման վարձի զեղչ ստանալու սանդղակում նշվում է ուսանողի առաջադիմությունը և սոցիալական վիճակը: **Հետևաբար, անհրաժեշտ է առաջադիմության այնպիսի արդյունք, որ կարողանանք զեղչային համակարգը կրճատել, քանի որ մեր ֆինանսական վիճակը վատանում է:** Պարզաբանեմ. ՀՀ ԿԳ նախարարությունը հրահանգել է ամեն տարի անվճար ուսանողների համակազմի 10%-ի ընդունվողների չափով վճարովի համակարգում ընդունված ամենաբարձր միավոր հավաքողներին զեղճել 100 %: Այս պրոցեսը 4 տարի գործում է: Այս տարի արդեն ունենք 100 % զեղչով սովորող 24 ուսանող: Տարեկան կտրվածքով 700,000 դրամից 14 մլն-ը չի հավաքագրվում, որի արդյունքում մենք ահավոր հարկեր ենք վճարում: Թվակազմի 10 %-ը չի թողնում օգտվել զեղչերի կանոնակարգը բավարարող մյուս ուսանողներին: **Եթե բոլորին գնահատեք «20», մեր ֆինանսական վիճակը չի բարելավի:** Քանի որ օրենքի սահմաններում ուսանողների թվակազմի 10 %-ին զեղչ ենք արել, հիմա պետք է պատասխան տաք, թե ինչու՞ եք զեղչ արել և, եթե զեղչը հիմնավոր չլինի, պետք է պատասխան տանք: Մեր խնդրանքն է, որ մարդկայինը մի քիչ հետ գնա և գործի օրենքը:

2. Մեզ մոտ աշխատելու է պարեկա-պահակային ծառայությամբ կազմակերպություն՝ փոխարինելով հաստիքային նախկին աշխատողներին: Աշխատակիցները հսկելու են կոնսերվատորիայի երկու մուտքերը, շրջելու են շենքով: **Փետրվարի 1-ից դասախոսական կազմի մուտքը քարտերով է լինելու, ուսանողներինը՝ ուսանողական տոմսերով:**

Հովհաննիսյա Սոնա Այս հարցով անպայման հանդիպում եմ ունենալու պարեկա-պահակային ծառայության խմբի հետ: Կզգուշացնեմ, որ առաջին շրջանում հանգիստ

վերաբերվեն, աստիճանաբար ծանոթանան դասախոսների հետ: Կբացատրենք մեր ԲՈՒՀ-ի առանձնահատկությունները և թույլ չենք տա անհարկի միջադեպեր լինեն: Այս ամենն արվում է ավելի կարգավորելու նպատակով, որպեսզի կոնսերվատորիայի մուտքից սկսվի քաղաքակիրթ վիճակ:

Մեյմարյան Քրիստինե Դիսպետչերանոցը տեղափոխվել է Գանձապահի նախկին գրասենյակ: Խնդրում ենք, որ դասախոսական անձնակազմը ստորագրությունները դնեն Դիսպետչերանոցի հաճախությունների բլանկում: **Եթե դասախոսը չի ստորագրի, այդ օրվա աշխատավարձը չի ստանալու:** Ստորագրությունների բլանկները կցվելու են աշխատանքի տաբելներին, պահվելու են ու հիմք են հանդիսանալու ներկայի համար՝ մինչև կմշակվի տաբելի վերջնական քաղաքակիրթ տարբերակը:

3. **Մեր կոնսերվատորիայի ակուստիկ լաբորատորիան օգտագործվում է ուսումնական պրոցեսի համար:** Ցանկություն կա, որ այն օրենքի սահմաններում ծառայի նաև ձեռնարկատիրական գործունեության մեջ: Արդեն ուսումնասիրել ենք ձայնագրությունների գների առաջարկները և կարող ենք տալ բավականին ցածր սակագին: Կոնսերվատորիայի ուսանողների համար պետք է լինի 20-30 % զեղչ: Այս ամենը հետագայի համար է: Եթե ձեր համաձայնությունը լինի, մենք ընթացք կտանք՝ կառավարություն ներկայացնելու համար: Եկամուտից հարկերը կգնան պետբյուջե, մնացածը կմնա կոնսերվատորիայի ծախսերի համար:

Հովհաննիսյան Սոնա Զեղչերին վերաբերող մեր գործը Դատախազությունում է. իրավունք չունենք ունենալ 10 %-ից ավելի գերազանցում, հակառակ դեպքում հետագայի համար մեր գրպանից պետք է վճարենք: Ես արդեն ՀՀ Կառավարություն դիմել եմ միջնորդավճարով, որպեսզի իրական պատկերը ներկայացնեմ. չի կարող նույն փաստաթղթով մի ուսանողը զեղչվի, իսկ մյուսը՝ ոչ: Եթե մեր մոտից բողոքներ են լինում, հետո անցնում են Նախարարություն, Դատախազություն, նորից վերադառնում է կոնսերվատորիա ու մեր հայեցողությամբ զեղչում ենք: Եթե մեր հայեցողությամբ ենք արել ու անցել 10 %-ը, պետք է հարկը մենք մուծենք: Պետք է հաշվի առնել ծուղակները և շատ շուտ լուծել: Մարդկային առումով շատ բարդ է այսպիսի իրավիճակում աշխատել (հատկապես իմ օգնական Շուշանի համար, ով երկար տարիներ այդ գործընթացի մեջ է):
Ստորագրությունների վերաբերող հարցին – Նորից ստուգումների արդյունքում ասում են՝ ինչպես է, որ տաբելում ամիս առաջ արդեն ստորագրել են: Այս ձևը հավաստի չի և ստուգման պահը հաճելի չի: Առայժմ նոր լուծում չկա: Ես էլ եմ գտնում, որ պետք է վերացվի ու լինի փոխադարձ հարգանք, վստահություն: Սա է ղեկավարության ու դասախոսության ամենաբարձր հարաբերությունը:

Տեղեկացնեմ, որ առաջին հարկի միջին հատվածում մեկ դասարան կդառնա դասախոսներին հատկացվող սենյակ:

Մենք ունենք կառավարման խորհուրդ, որն ունի

1. Հիմնադրի անունից առաջադրված խորհուրդ - 6 անդամ
2. Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհուրդ – 6 անդամ
3. Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհուրդ – 6 անդամ
4. Ուսանողության կողմից ընտրված խորհուրդ – 6 անդամ

ա/ **Կառավարման խորհրդում փոփոխություն անելու խնդիր ունենք:** Ջութակահար Սերգեյ Խաչատրյանը (Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամ) ինքնաբացարկ է հայտնել, քանի որ չի հասցնում մասնակցել և չի կարող արդյունավետ աշխատել:
բ/ Ուսանողների կողմից հետևյալ կարծիքն ենք լսել, որ իրեք չգիտեն՝ ինչ սկզբունքով են փոքր խորհուրդներում ընտրվել անդամները:
Ուսանողական խորհրդում շտկումներ պետք է արվեն և **Կառավարման խորհրդում պետք է փոխվեն բոլոր ուսանողները (նրանք ավարտական կուրսի ուսանողներ են):** Պետք է օրինավոր ձևով՝ **Ուսխորհրդի որոշմամբ ընտրվեն ուսանողները և վերակազմավորվեն փոքր խորհուրդները:**
Կխնդրեմ տեղեկացնել, որ **Փետրվարի 11-ին, ժամը 12-ին Օպերային ստուդիայի դահլիճում տեղի կունենա համակոնսերվատորիական Ուսանողական ժողով, որին դիտորդի կարգավիճակով ներկա կլինեմ նաև ես:**

Խոստացել էի, որ երկրորդ կիսամյակի սկզբից կգործի սննդի կենտրոնը: Լուծվել են բոլոր իրավական հարցերը, պարզապես ֆիզիկապես չեն հասցնում և կսկսեն աշխատել մարտ ամսից: **Կոնսերվատորիայի մուտքի մոտ , ձախ կողմից ունենք նկուղային տարածք, որտեղ կգործի մեր սննդի կետը:**

Արդեն ունենք Էթիկայի հանձնաժողովի կարգ: Կխնդրեմ Արթուր Ավանեսովին ներկայացնի:

Ավանեսով Արթուր ՀՀ ԿԳ պահանջների համաձայն բոլոր ԲՈՒՀ-երը պետք է ունենան «Էթիկայի հանձնաժողով»: Կազմը նշանակվում է ռեկտորի կողմից (5-7 անդամ), հնարավորինս տարբեր ամբիոններից, ԲՈՒՀ-ի ղեկավարության կազմից: Որոշեցի իմ աջակցությունն առաջարկել, որովհետև արդեն իսկ Ամերիկյան համալսարանի նույն հանձնաժողովի անդամ եմ, ծանոթ եմ գործելակերպին, կանոնակարգերին: Իմ աշխատանքային ու սովորելու փորձը հաշվի առնելով կառուցվածքային փոփոխությունների հանձնաժողովին ներկայացրել եմ առաջին էսքիզը, որը զգալի փոփոխություններով հաստատվեց: **«Էթիկայի հանձնաժողով»-ը չպետք է դիտարկել որպես պատժիչ օրգան, այն խորհրդատվական մարմին է և վերջնական որոշումներ կայացնելու ձայն չունի:** Այստեղ ոչ միայն ոչ միայն ուսանող-դասախոս կամ միջկոլեգիալ խնդիրներ են, այլև՝ գիտական էթիկան է (դասախոսներին վերաբերող պլագիատի հարցը): Էթիկան շատ լուրջ խնդիր է: Հիմա կա հնարավորություն

- դիմել ռեկտորին
- գրանցել բողոքը
- գրավոր ստանալ պատասխան

Շատ կարևոր է, որ «Էթիկայի հանձնաժողով»-ի բոլոր նախագահները միշտ վարեն մատյան, որտեղ պարտավոր են նշել բոլոր խախտումները և դրանց կրկնությունների դեպքում սահմանել առավել խիստ նկատողություն: Սա պետք է դիտարկել որպես կարգապահությունը հնարավորինս վերականգնող հարց:

Հովհաննիսյան Սոնա «Էթիկայի հանձնաժողով»-ի անդամները կճշտվեն: Առայժմ ներկայացված է կանոնակարգը, որը կդրվի նաև կայքում: Ծանոթացեք, որպեսզի ձեր

առաջարկությունները, առարկությունները հաշվի առնենք, ամրագրենք, ունենանք հանձանժողովի անդամների որն էլ սկսի աշխատել:

Նավոյան Միհեր Առաջարկում եմ, որ առանձնացնել Գիտական էթիկայի հարցերը և լինի առանձին հանձնաժողովի տեսքով, գործի հրատարակչական օղակին կից: Իսկ «Էթիկայի հանձնաժողով»-ը զբաղվի ԲՈՒՀ-ի ներքին էթիկայի հարցերի քննարկմամբ:

Շագոյան Գոհար ԲՈԿ-ը ինձանից էթիկայի նորմեր է պահանջել միայն ամսագրի համար:

Ավանեսով Արթուր Ամբիոնի վարիչներին ուղղված ևս մեկ հարց: Խնդրում եմ ստուգեք ձեր դասախոսների ժամային ծանրաբեռնվածությունը: Իմ թերթիկի մեջ չհամապատասխանեցին:

Ոսկանյան Նոնա Ես պատասխանեմ: Քանի որ դասախոսական ծանրաբեռնվածությունը որոշվում է տարեկան կտրվածքով և բաժանվում է 10 ամսի, համակարգիչը տալիս է տասնորդական կլորացմամբ և կարող է, որ վերջնական թիվը չի համապատասխանում: Բայց դա համակարգչային ճշգրիտ բաժանում է: Կարևոր է, որ գրվում է վերջնական, ամսական կտրվածքով:

Ավանեսով Արթուր Ամբողջ խնդիրը տասնորդականի մեջ չի, տարբերությունը ամբողջ թվերի մեջ է:

Հովհաննիսյան Սոնա Խնդրում եմ այս հարցերն առանձին ճշտեք:
Հիշեցնեմ ամբիոնի ղեկավարներին, որ Ուսումնական պլանների խմբագրված տարբերակների ներկայացման վերջնաժամկետը մարտի 1-ն է:
Գիտխորհրդի նիստերը կանցկացվեն ամեն ամսվա վերջում:

Չալոյան Ծովինար Բժշկության ապահովվագրության հարցում ի՞նչ նորություն ունենք:

Հովհաննիսյան Սոնա Հիմա օրակարգում է Կրթության և գիտության ու Մշակույթի նախարարությունների միացման ընթացակարգի բարդ հարցը: Մինչև դա չկարգավորվի, չենք կարող Ձեր նշած հարցը ներկայացնել:
Գիտեք՝ կոնսերվատորիայի նվագախումբ, երգչախումբ, փողային նվագախումբ կազմելու հարցեր ունենք: Այս ամենը ուժի մեջ է:
Այս ամսվա ընթացքում գործիքների հարց է լուծվում. մեզ Պաշտպանության նախարարությունը անհատույց փողային գործիքներ է նվիրում:
Փետրվարի 22-ին կոնսերվատորիայում հյուրընկալում ենք Հայաստանում Ճապոնիայի Արտակարգ և Լիազոր դեսպան Ջուն Յամադային՝ առանձին համերգային ծրագրով և փոխհամաձայնեցման նպատակներով:
Կոմիտասի 150-ամյակի շրջանակում այսօր հյուրընկալել էի «Ավրորա» հիմնադրամի ներկայացուցիչներին: **Կոնսերվատորիայի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և «Ավրորա»-յի հետ համատեղ հոկտեմբերի 14-ին Տաթևի վանքում ֆորում է սկսվելու:** Մենք ունենալու ենք հետաքրքիր ու հրաշալի օր. այն, ինչ տեղի է ունեցել Կոմիտասի ստեղծած 300

հոգանոց երգչախմբի պատմության մեջ, կարողանանք տեղի ու մեր ուժերով համատեղ իրագործենք և ունենանք կարևոր օր: Հետևեք տեղեկատվությանը:
Ընդհանրապես մեր հանդիպումները հաճախ չեն և շատ դեպքում անտեղյակությունից սխալ լուրեր են տարածվում: Այդ պատճառով հիմա աշխուժացնում ենք մեր կայքը Ֆեյսբուքյան էջը, որտեղ կդրվեն թարմ ու ստույգ տեղեկատվությունը:
Բոլոր հայտարարությունները, գիտաժողովների, կոնսերվատորիական համերգների հայտագրերը, վարպետաց դասերը կտեղեկացվեն այս պահին մշակվող շաբլոններով՝ տարբեր գույներով: Հույս ունենք, որ ներդրումներ ունենալու դեպքում կայքում էլ կլինի:

Մովսիսյան Ծովինար (Գիտական գծով պրոռեկտոր) Գիտական մասով այս ամիս համեստ լուրեր ունենք: Ստացել ենք ԲՈՒՀ-ական գիտաժողովների մասնակցելու հրավերներ. **մայիսին Բաթումում կանցկացվի Ուսանողական գիտաժողով, որտեղ գործում է նաև հեռակա մասնակցության հնարավորությունը**: Սա կհարստացնի մեր փոխհարաբերությունները, դասախոսներին միջազգային հարթակում դրսևորվելու միջոց կլինի:
Նաև լրացնեմ շնորհավորանքների շարքը. օրերս ԵՊԿ հրատարակչությունը նշեց իր 15-ամյակը: Տիկին Գոհար Շագոյանը հաճելի օր նվիրեց ներկաներին, որոնք այս տարիների ընթացքում համագործակցել են հրատարակչության հետ: Ներկայացվեց արած պատմությունը և գալիք անելիքները: Ուզում եմ Գիտխորհրդի կողմից շնորհավորել Հրատարակչությանը և մաղթել համատեղ համագործակցությունն՝ ի նպաստ մեր գիտական մտքի, մեթոդական մշակումների, որ ամսագիրը լինի ավելի ակտիվ ու այս օրվան համահունչ: **Տեղեկացնեմ, որ արդեն մեր կայքում կա «Երաժիշտ» թերթի էլեկտրոնային տարբերակը՝ ներկայանալի տեսքով ու ընթերցված նյութերի քանակով:**

Ավանեսով Արկադի (Միջազգային կապերի գծով՝պրոռեկտոր) Ներկայացնեմ ԵՊԿ-ի միջազգային գործող և նախատեսվող ծրագրերը:
Այս տարի շարունակվում է BOOST-ը (որը Հայաստանի ԲՈՒՀ-երը միջազգայնացման ծրագիր է): Ստոկհոլմում ունենալու ենք աշխատանքային հանդիպում, իսկ հոկտեմբերին այդ ծրագիրը եզրափակվելու է՝ «ՀՀ ԲՈՒՀ-ի ռազմավարության ծրագիր» կազմելով:
Շարունակվում է Ֆինլանդիայի Տուրկու համալսարանի հետ համագործակցությունը (անցյալ տարի դասախոսների փոխանակություն ունեցանք, իրականցվեց ուսանողների շարժունակության նախագիծ): Փետրվարին այնտեղ կմեկնի մեկ ուսանող-դաշնակահար, մարտին կմեկնի ԵՊԿ դասախոս, թավջութակահար Արամ Թալալյանը, ապրիլին սպասում ենք նրանց թավջութակահար-դասախոսի այցին:
Լիսաբոնի համալսարանի հետ ունենք երկկողմ պայմանագիր, համաձայն որի մեր մեկ երաժշտագետ-ուսանողը 6 ամսով մեկնում է Պորտուգալիա:
Ապրիլ ամսին «ERASMUS +» ծրագրի առնչությամբ նախատեսվում է ալտահարի, մայիսին՝ սաքսաֆոնահարի այցեր:
Ապրիլի 4-6-ի ժամանելու է «Ցինանդալի» փառատոնի կազմակերպիչները՝ անցկացնելու լսումներ, ընտրություններ, որ օգոստոսին Վրաստանում նվագեն միջազգային միացյալ նվագախմբի մասնակցությամբ փառատոնին:
Շոտլանդիայի Royal Academy –ի հետ լավ համագործակցություն ենք ունեցել: Այս տարի «ERASMUS +» ծրագրի շրջանակներում նորից համատեղ ծրագիր կազմելու հայտ ենք տվել, որին կմասնակցենք Երևանի, Թբիլիսիի կոնսերվատորիաները և Royal Academy-ն:

Նոր պայմանագիր ունենք իտալական Սիենայի Ջազ ակադեմիայի (Siena Jazz Academy) հետ. մայիսին ժամանելու են ռեկտորը և միջազգային կապերի բաժնի պետը: Այդ ծրագրով մյուս ուսումնական տարի մեր 3 դասախոս մեկնելու է Սիենա, այնտեղից գալու են 2 դասախոս, ինչպես նաև փոխանակելու ենք մեկական ուսանող:
Ունենք Կոմիտասի 150-ամյակին նվիրված ծրագիր. Հայաստանը, Մինսկը և Տալինը կմասնակցեն հոգևոր երգի կատարման աուդիո-վիդեո կամուրջին՝ նվիրված այդ հոբելյանին: Վերջում նախատեսված է Կոմիտասի Պատարագի համատեղ կատարումը:
ՀՕՖ-ը հոկտեմբերի կրկին կազմակերպելու է միջազգային մրցույթ: Այս անգամ այն կլինի մեծանուն ջութակահար, մանկավարժ Հրաչյա Բոգդանյանի անվան լարային մրցույթը: Արդեն կան արձագանքներ Ռուսաստանից, Վրաստանից, Լիբանանից:
Թումանյանի 150-ամյակի առթիվ մտահղացում կա՝ ՀՕՖ-ի դոնորների ընտրությամբ հոբելյարի բանաստեղծության հիման վրա մեր կոմպոզիտոր-ուսանողները երգեր գրեն: Այդ գործերը հնչեն պաշտոնական համերգին, որին կհրավիրվեն ՀՕՖ-ի դոնորները, որը կոնսերվատորիային մոտիկից ծանոթանալու ևս մեկ առիթ կլինի:

Այլ հարցեր

Շագոյան Գոհար Շաբաթ-կիրակի օրերին շենքում միջոցառում ունենալու դեպքում նոր պարեկա-պահակային նոր կարգի պայմաններում ինչպե՞ս է լուծվելու մուտքի հարցը:
Հովհաննիսյան Սոնա Միջոցառումների դեպքում պետք է բաց լինի:

Պեպանյան Վաղարշակ Նախկինում Փողային կատարողները Ուսումնական գծով պրոռեկտորից ստանում էին անուն-ազգանունով, կնիքով բլանկեր՝ շաբաթ օրերը շենքում պարապելու համար:
Հովհաննիսյան Սոնա Այդ կարգը նորից կարելի է շարունակել:

Հարությունյան Հասմիկ (ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի ռեկտորի ժամանակավոր պաշտանակատար) Երախտիքի ու շնորհակալության իմ խոսքն եմ ուղղում վստահության համար, ոչ միայն այս պաշտոնին առաջադրվելու, նշանակվելու համար, այլև այստեղ գտնվելու համար: 21 տարվա մեջ Գյումրին ինքնամեկուսացման վիճակից պետք է դուրս գա, դա էր այն հանգամանքը, որ ես համաձայնվեցի աշխատել: Մինչ այժմ ճիշտ քաղաքականություն չի արվել, և Գյումրին մնացել է ինքնամփոփ կյանքի մեջ: Ինքս 5 տարի առաջ հեռացել էի ԲՈՒՀ-ից: ԵՊԿ Գիտքարտուղար Ժաննա Զուրաբյանը միշտ հորդորում էր ներկայանամ դոցենտի կոչում ստանալու համար, բայց Գյումրիում դրվել են բազմաթիվ խոչընդոտներ: 21 տարեկան ԲՈՒՀ-ը ունի ԲՈԿ-ով հաստատված ընդամենը 2 դոցենտ և 1 պրոֆեսոր: Շուրջ 16 տարի եղել է շատ սուբյեկտիվ կառավարում:
Հարցեր շատ կան, բայց ամենամեծ ցանկությունը, որ Գյումրին ընդգրկվի գիտական, մեթոդական, կատարողական կարևոր քայլերում, որը ԲՈՒՀ-ը պարտավոր է անցնել: Փոխանցում եմ մասնաճյուղի ուսանողա-դասախոսական կազմի երախտիքը, որ չի լուծարվել Լորիս Ճգնավորյանի ուխտագնացությամբ հիմնված կրթօջախը: Խնդրում եմ ԵՊԿ ամբիոնների վարիչներին, դեկաններին օգնեն լուծել վարչական և ուսումնական խնդիրների հետ կապված հարցերը: Ունենք ներուժ, նույնիսկ կարող ենք գիտական պարբերական հրատարակել (ասենք՝ միջբուհական լրագրի ձևով), ունենք երիտասարդ դասախոսական

կազմ, ովքեր կարող են անցնել գիտամեթոդական պահանջներն ու հաստատվել, որպես **ԵՊԿ-ի** արժանի մաս:

Սարգսյան Սվետլանա Ես և իմ գործընկերները Գյումրին երբեք չենք նայել որպես երկրորդական, որովհետև այն մեր սրտի մասնիկն է: Միշտ ուզում ենք գալ, որ մեր պրոֆեսիոնալ պարտքը կատարենք: Անկախ անցյալի վերաբերմունքի, Դուք, մենք մասնակցել են գիտաժողովներին, նյութերով ենք ապահովել և չենք մտածել, որ դուք երկրորդական եք եղել: Նույնիսկ որոշ պարբերականների, ամսագրի, գիտաժողովների (Մոսկվայից, Պետերբուրգից ինչքան նոր մարդկանց էին ներգրավել) համեստ միջոցներով կարողացել եք Հայաստանի անունը բարձրացնել ունենալ համբավ: Պետք է ավելի բծախնդիր, պատասխանատու լինենք, միգուցե կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» ամսագրում Գյումրիին նվիրված էջ ունենանք:

Չալոյան Ծովինար Գյումրիին նվիրել եմ 100-ից ավելի ձայնասկավառակ, JVC ձայնարկիչ, որը պետք է ծառայեր: Դա աշխատու՞մ է:

Հարությունյան Հասմիկ Ձայնարկիչը տեխնիկական խնդիր ունի: Սկավառակները հաշվառման փուլում են, ունենք ձայնադարանի մեծ ֆոնդ: Չեմ ստացել գույքագրման ոչ մի փաստաթուղթ:

Հովհաննիսյան Սոնա Բոլոր մութ հարցերը կվերանայվեն: Ուզում եմ ասել, որ անցյալին շատ նայելով որևէ տեղ չենք հասնի: Այսօր աշխատում ենք այս փուլով, այս վայրկյանին, այս պահի մեջ միասին լինելու, ապրելու և աշխատելու ձևը: Իհարկե, պետք է հաշվի առնել պարզել մտահոգիչ հարցերը, բայց մարդկային, հոգեբանական առումով պատասխանատվություն կրենք մեր գործողությունների համար:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ պրոֆ. Սոնա Հովհաննիսյան

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Օլգա Նուրիջանյան